

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

SOMMAIRE

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	ԷՁ
ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԻԱՆ Հ. Ն. - Հայոց կղզիի 250-ամեակը. 1717-1967 (Շար. 5)	237
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ԱՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ. - Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի (Շար. 14)	243
ՔԻԻՐՏԵԱՆ Յ. - Պատմության կրթության Ս. Կարապետ եկեղեցույն	252
ԼԵՋՈՒԱԿԱՆ	
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՅԱԿՈԲ Մ. - Արքայադր Միսրի-բար Սեբաստացու շարահյուսական ըմբռնումները (Շար. 3)	256
ԳԵՂԱՐՈՒԵՍ	
ՔՈՐՊՈՒԼԻ ՏՈՄՈՆԻՔՈՇ. - Հայկական մարտապետության ազդեցությունը՝ Հունգարիայի առաջին եկեղեցիներում վրայ (Թրգմ. Հ. Ղուկաս Ֆոկոյան)	261
Կ. Վ. - Նկարիչ Ժիրայր Օրագեան	273
ԳՐԱԿԱՆ	
ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. - Անտիկ էջեր Չարմահալի ժողովրդական առակներից եւ սրամիտություններից (Շար. եւ վերջ)	269
ՍԻՐԱԲԻԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. - Եղիշե Չարեան	279
ՍԻՐԱԲԻԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. - Եղիշե Չարեանի ծըննդեան 70ամեակին առիթով (բանաստեղծություն)	280
ԳԱՍՊԱՐԻԱՆ ԱՌԱՆ. - Չորս գաղափարներ՝ մեկ հոգիի համար	286
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
* * *. - Վեհ. Վազգեն Ա. Կաթողիկոսի գնահատական նամակը՝ Հայկական Մանրանկարչության հատորին մասին	255
ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ Հ. ԵՓՐԵՄ. - «Յուշամատենան Պոնտական Ամասիայի», Գաբրիել Յ. Սիմոնյանի (1967)	288
ԱՆՏՈՆԵԱՆ Հ. ՌԱՓԱԵԼ. - «Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը», Սուրեն Շուրիկյանի (Երևան, 1967)	289
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԶԱԳԱՆԳ	
ՍԻՐԱԲԻԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. - Չարեանի շաբաթը՝ Հայաստանի մեջ	282

ARTICLE DE FOND	PAGE
DER-NERSESSIAN P. N. — Le 250ème anniversaire de l'Ile des Arméniens: 1717-1967 (Suite)	237
PHILOLOGIE	
ANANIAN P. PAUL. — La vie de St. Mesrop (Suite)	243
KURDIAN H. — Histoire de l'Eglise St. Karapet de Crète	252
LINGUISTIQUE	
MEKHITHARIAN HAKOB M. — Les idées syntaxiques de l'Abbé Mekhithar de Sébaste (Suite)	256
BEAUX ARTS	
KORBULY DOMONKOS. — L'influence de l'architecture arménienne sur les premières églises de l'Hongrie (Trad. par P. Luc Fogolyan)	261
G. V. — Le peintre Jirayr Orakian	273
LITTÉRATURE	
YEREMIAN ARAM. — Pages inédites de proverbes et d'anecdotes satiriques de Tcharmahal (Suite et fin)	269
SIRABIAN ARAMAYIS. — Eghiché Tcharentz	279
SIRABIAN ARAMAYIS. — En l'occasion du 70ème anniversaire de la naissance d'Eghiché Tcharentz	280
GASPARIAN ARAN. — Quatre histoires distinctes pour une âme	286
RECENSIONS	
* * *. — Lettre d'appréciation de S. S. Vazkène Io, pour l'édition de la «Miniature Arménienne»	255
DER GHAZARIAN P. EPHREM. — «Livre de Mémoires d'Amasia de Pont», de Gabriel H. Simonian (1967)	288
ANDONIAN P. RAPHAEL. — «La création artistique et littéraire d'Alishan» de Souren Chdikian (Erévan, 1967)	289
ECHO ARMÉNIEN	
SIRABIAN ARAMAYIS. — La semaine de Tcharentz en Arménie	282



1843 - 1967
ՃԻԵ. ՏԱՐԻ
•
ԹԻԻ 11 - 12
ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՀԱՆԴԻՍԱՐԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXXXV^o année, 1967, N. 11 - 12 Novembre - Décembre

ՅԻՇԱՏԱԿԻ ԽՈՀԵՐ

ՀԱՅՈՑ ԿՂԶԻՒՆ 250ԱՄԵԱԿԸ
(1717 - 1967)

Ե.

Հրդեհին ետք՝ վերակառուցում: Վարդապետի այն լավիկող ընդերը, կարծես, նոր խանդ ու աւելն ներշնչած էին Ս. Ղազարի տնային վանականներուն: Իրենց առաջին տունը, Մեթոնի դեղեցիկ վանքը, ան ալ հրոյ-ճարակ էր եղած ու հիմար նախատակ կործանած՝ մէկ ու կէս դար առաջ, հեռուոր 1715ին: Բայց Միսրիան իր ողորները, Սաղմոսին խօսքն իրենց շրթներուն, եւս աւելի՛ իրենց հոգիներուն մէջ դրոշմած, աստուածային Նախնամութեան օղնութեամբ՝ նոր ընդարձակում: Նոյնը պիտի ըլլար հիմակ ալ: Իրենց նշանաբան էր դարձած.

«Անցաք մեր ընդ հուր եւ ընդ ջուր,
«Եւ հաներ զմեզ ի հանդիստ»:

Հանդիստ... որ պիտի բեղնաւորուի տրեւիտեան աշխատանքովը Ժիր միաբաններուն:

Ս. Ղազարի պատմութեան չորրորդ շրջանը կ'ողջունենք արդէն, որ պիտի երկարէ 1884-1920, հրդեհին պատերազմ, խաղաղութեան եւ արիւնի սարսուռներու ընդմէջէն:

1883ի հրդեհին ետք, շնորհիւ վեհանքի նուիրատուներու օգնութեան եւ վանքի խնայողական ճիշդերուն, շուտով կը սկըսին վերակառուցումի աշխատանքները. ու մէկ տարուան ընթացքին, որոշ արդիւններով եւ սենեակներու նոր յարմարցումներով՝ կը նորոգուի վանքի ամրացումներով եւ կ'երկարանայ իրենց անհրաժեշտութեան թեւը, որ կ'երկարի Արքայադր սենեակներէն դէպի նոր ընծայարան: Այրած ու քանդուած մասին տանիքը այժմ աւելի կը բարձրացնեն, ստեղծելով ընդարձակ ձեղուն մը, որով կը յաջողին նաեւ ընձեռել արտաքին ներդաշնակութիւն մը՝ ընդմէջ 1824ին կառուցուած նոր շէնքերուն եւ հին նորընծայարանին: Այս առիթով, վանքի ընծայարաններու յարկաբաժնին վրայ (նոր ընծայարան) նոր յարկ մըն ալ կը կառուցուի, որ կ'ամփոփէ աշակերտական բնակարաններու նոր շարք մը, օղատուն

տասնհեռնից խցիկներ եւ քառակուսի մեծ սենեակ մը, անշուշտ միաբանական դոր-
ծունէութեան նոր դարկ տալու հեռանկա-
րով: Հրդեհէն առաջ, նորընծայարանի
երրորդ յարկին վրայ կային լոկ հինգ
սենեակներ:

1884ին, եկեղեցւոյ մէջ կը գետեղեն՝
դասը առեանէն բաժնող ցած ու գեղեցիկ
սիւնաշարք մը, վարդադոյն ընտիր մար-
մարով: Նոյն տարին, կը վերցուին դա-
սին ընկողյէ թանձր հին նստարանները,
եւ անոնց տեղ կը շինուին նորեր, աւելի
թեթեւ ու նրբաձաշակ, որոնք կը մնան
ցարդ:

1888ի առեանները, տեղի կ'ունենայ գե-
րեզմանատան երկրորդ ընդարձակումը,
Հ. Մանուէլ Վրդ. Բաջունի արդիւնքով:
Աւանդատան որմին կից, գէպի արեւելք,
կը կառուցուին եռակարգ քարաշէն տա-
պանանկուղներ, թիւով երեսուն. մար-
մարապատ եռանկիւնաձեւ շինուածքին
դադաթն ու եզերքները կը գետեղուին
մարմարեայ հինգ արձաններ. առաջին ե-
րեքը կը մարմնաւորեն Հաւատքը, Յոյսն
ու Սէրը. իսկ ծայրի երկուքը՝ պսակա-
րեր ու փողահար հրեշտակներ են. ար-
ձանագործն է Giovanni Fusaro: «Եւ ի
շինութիւն այսոցիկ երեսուն տապանաց
եւ հնդից անդրեաց, եղեն ծախք 9.000
փրանկ» կը գրէ Հ. Մանուէլ Վ. Բաջու-
նի, 1901 Յունիս 6 թուակիր նամակով:

Նահապետը յուզիչ ու խորհրդաւոր
տապանագիր մը յորինած էր, տարիներ
առաջ, Մխիթարեան Հայրերու գերեզ-
մանատան համար:

Ի հայրենեաց նըժգեհ քոժարք յանխուլ կղզիս
ի սպաս փըրկչին, Մօրքն կուսի եւ Հայ Ազգիս
Ուր միաբան վաստակեցին՝ հանգչին եւ անդ
Հարք եւ Եղբարք Մըխիթարեանք յոյս անվըկանդ:
Յարփիանալ մահահալած կենացն աւուր
Նորադիտակ գուգապարիլ լուսափնտուր:

Իր պարզութեան մէջ, խորհուրդներու
ծով մը կը պարզէ Ալիշանի այս արձանա-
գրութիւնը, որ եկեղեցւոյ որմին վրայ
կանգուն՝ կը նայի միշտ փողահար հրեշ-
տակին, ու Մխիթարեան խոնարհ վանա-
կաններու ջերմ պաղատանքը կը ներկա-

յացնէ խորհրդաւոր այն արձանին, որուն
ներքեւ քանդակուած է.


Յոյս մեր եւ ապաւէն՝ Տէր Յիսուս

Այս հաւատքով՝ անոնք միաբան վա-
տակեցան ու միասին կը հանդէսն հոն,
իրենց կեդրոնն ունենալով հաւատաւոր
այդ ծերունին՝ նոյնինքն լուսապսակ Ա-
լիշանը:

1899-1900 թուականներուն, վերանո-
րոգութեան հիմնական ու մեծ աշխա-
տանքներ կը տարուին վանքի եկեղեցւոյն
մէջ, Գրպ. Իզն. Կիւրեղեան Արքահօր
ձեռնհաս առաջնորդութեամբ ու ջանքե-
րով: Փոքրիկ եկեղեցեակ մըն էր ատիկա՝
1717ին, երբ Մխիթար ոտք կը կոխէր հոն.
այժմ պիտի դառնար իսկական մայր տա-
ճար:

Բեմը ընդարձակելու ծրագրով, վար
կ'առնուի նախ խորանաձեւ ճակատը, ո-
րուն մարմարեայ չորս չքեղ սիւները կը
փոխադրուին դաւիթին մէջ. բեմը շուրջ
հինգ մեզը առաջ կը տարուի ու կը կա-
ռուցուի կամարաձեւ կոնք մը, զօթական
նրբաձեւ սիւնաշարքով ու հինգ մեծ պա-
տուհաններով, որոնցմէ երեքին մէջ կը
գետեղուին գունագեղ նկարազարդ ապա-
կիներ, Աւստրիոյ Ինցպրուկ քաղաքը պա-
տրաստուած. կը ներկայացնեն, կեդրո-
նը՝ Ս. Ղազար բարեկամ Քրիստոսի. ա-
ջին ու ձախին՝ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ,
կանգուն. առաջինը՝ պատարագի հայրա-
պետական զգեստաւորումով, ձեռքին
բռնած հայատառ Աստուածաշունչը, ո-
րու առաջին էջին վրայ կը կարդացուին.
Ի սկզբանէ արար Աստուած: Իսկ Մես-
րոպ՝ վարդապետական զգեստաւորու-
մով, ձեռքին՝ պաշտելի մագաղաթը հայ
տառերուն, կարծես առաջին դասը կու
տայ Ա. Բ. Գ. ի ...:

Ու ամէն արշալոյսի, մինչ վարը դա-
սին մէջէն անոյշ կը հնչեն խորհրդաւոր
երգերը մեր Արեւազալի, լոյսի առաջին
ճառագայթները կը հասնին մեզի Ս. Սա-
հակի սրտին ու Ս. Մեսրոպի լուսաճա-
ճանչ մագաղաթին ընդմէջէն, ոսկեղէն
դարու ստեղծագործ խորհուրդին շողերը



Ս. Ղազարի մուտքը, 1883ի երգեհոն անվանապէս ետք

բերելով մեզի, ու պարարելով մեր սրը-
տերը՝ սրբազան խանդավառութեամբ:

Կը ծագի լոյսն արեւական, լոյսն առ-
տուածղիտութեան, լոյսը սրբութեան:

1900ի նորոգութիւններու ընթացքին,
Մխիթար Արքահօր դամբանն ալ, եկեղե-
ցական պարտուկառաջած արտօնութեամբ
ու հանդիսաւոր արարողութիւններով՝
կը տեղափոխուի գէպի առաջ խորան:

Եկեղեցւոյն առաստաղը, կապուտակ ու
աստղաճամուկ նոր երկինք մը կը դառ-
նայ, ուր կը բարձրանան աղօթողներու
աչքերը — ըստ 1900ի աշխատանքներուն
ականատեսի մը վկայութեան — որմերուն
ու կամարներուն վրայ ցանուած ոսկե-
գոյն խաչերուն մէջէն անցնելով:

Կ'երանդաւորուի բոլոր եկեղեցին. հայ
սուրբերը կ'իջնեն հոն. Նարեկացիէն Շը-
նորհալի, Վարդան ու Ղեւոնդ, զոյգ Ներ-
սէսները՝ Պարթեւ ու Լամբրոնեան, Սան-
դուխտ ու Հովհաննէս կոյսերուն հետ
կ'ունենան իրենց բոլորաձեւ որմանկար-
ները, ընդմէջ լայն կամարներուն, աշ-

խատութեամբ E. Paoletti համբաւաւոր
նկարիչին: Անդին, Ս. Յովհաննէս Մկր-
տիչ եւ Ստեփանոս կը կանգնին դասին մէջ,

ամէն Կիրակոսութիւն մօտենալու մեր
սրտերուն: Իսկ Լուսաւորիչ, Տրդատ ու
Խորհրդիւղուխտ, արդէն իսկ Մխիթարի
օրերէն կը հսկեն տաճարին մէջ՝ իրենց
ընկի խորանով:

Եկեղեցւոյ աւանդատունն ու դաւիթն
ալ կը նորոգուին ու կը ներկուին. վերջի-
նիս ձեղունին վրայ նկարուած Տիրամայ-
րը (գործ N. Bordignon նկարիչին), զուր-
դուրանքով կը հսկէ Ս. Ղազարի վրայ,
մինչ միւս երկու նկարները կը պատկե-
րացնեն Մխիթար Արքահօր վարքին մէջ
պատմուած երկու տեսիլքները:

1901ի վանքի մեծ յորելեանին՝ մայր
տաճարը հարսի նման չքեղ ու փայլուն,
կը բանայ իր դռները. Իտալիոյ Մարգա-
րիտա թագուհին, հինաւուրց բարեկամ
Հայոց Կղզիին, առաջ բեմին համար կ'ըն-
ծայէ թաւեայ փառաւոր ու զարդարուն
մեծ վարագոյր մը, ոսկեղոյն խորքի վը-

